

Գր. Վ. Գարանաղցի 1612ին Վ. Պոլես  
 եկած էր Տրապիզոնի վրայէն, երբ իրեն մտերիմ  
 երկու քահանաներ եկան ըսին, թէ Գր. Վ. Վե-  
 սարացի նոյն 1612ին Յովհ. Խուլը պաշտօնանկ  
 ընել տուած եւ դարձեալ Պատրիարք եղած է,  
 եւ խստիւ արգելած է որ թէ իրեն (Գարանաղ-  
 ցւոյն) հետ եւ թէ Խուլին հետ բնաւ մէկը  
 յարաբերութիւն չունենայ. եւ վայ անոր՝ որ  
 առանց իր հրամանին «սեւագլուխ», մը կ'ընդունի  
 կամ քովը կ'երթայ ոչ միայն ի Վ. Պոլես, այլ  
 ամէն տեղ՝ թէ յԱնատոլու եւ թէ ի Ռուսիի:  
 Ասոնք խորհուրդ կու տան Գարանաղցւոյն՝ եր-  
 թալ բնակիլ խօճա խանը, մինչեւ որ Պա-  
 տրիարքի տրամադրութիւնն իմանան: Քահանա-  
 ները Պատրիարքին կ'երթան, որ կ'ըսէ իրենց.  
 «Չեր աղան եկած է. գացի՞ք քովը»: Ասոնք  
 չգիտնալ եւ առաջին անգամ իրմէ լսած կը  
 ձեւացընեն. կը հարցընեն՝ թէ ո՞ր եկեղեցին կը  
 հրամայէ որ իջեւանի: «Թէպէտ անոր Պոլես  
 դռնալուն կամք չունէի, կ'ըսէ Պատրիարքը,  
 բայց քանի որ եկած է, թող ինձի գայ, ես կ'ո-  
 րոշեմ»: Գարանաղցին, որ անցեալին մէջ արդէն  
 ընդհարումներ ունեցած էր Պատրիարքին հետ,  
 գրական նուէրներով (եկեղեցական գիրք մը եւ  
 Գիօնեսսիոսի մեկնութիւնը,) կը ներկայանայ անոր,  
 բայց ցուրտ ընդունելութիւն կը գտնէ: Պա-  
 տրիարքը կը կշտամբէ զինքը Պոլես եկած ըլլա-  
 լուն համար, կ'ըսէ. քահանաները եւ ժողո-  
 վուրդը կը տրտնջեն թէ հազիւ իրենց ընտանիքը  
 կրնան կերակրել, ուրիշներն ինչպէս պահեն: